ԹԵՄԱ 1 ԵՎՐՈՊԱ

ԴԱՍ 1.6. Ռուսաստանի Դաշնություն: Բնակչությունը

Մոսկվայի մասին առաջին հիշատակումից ընդամենը մեկ դար հետո քաղաքը ստանձնեց համառուսական կենտրոնի դեր, ապա դարձավ Ռուսաստանի մայրաքաղաք (1712–1728-ը և 1732–1918-ը Ռուսաստանի մայրաքաղաքը եղել է Պետրոգրադը): Մոսկվայի բնակչության թիվը տարեց տարի աճում է (1959թ-ին՝ ավելի քան 6մլն մարդ, 1979թ-ին՝ 7,8մլն մարդ, 2006թ-ին՝10,4 մլն մարդ): Հատկանշական է, որ առավոտյան և գիշերային ժամերին քաղաքում գտնվող մարդկանց թիվը խիստ տարբեր է, պայմանավորված այն հանգամանքով, որ ցերեկային ժամերին մի շարք մարդիկ գալիս են քաղաք աշխատելու, սովորելու և այլ նպատակներով, իսկ երեկոյան եւ վերադառնում իրենց բնակավայրեր՝ կատարելով ճոճանակային միգրացիա:

Մոսկվան երկրի հաղորդակցության ճանապարհների գլխավոր խաչմերուկն է, տրանսպորտային և արդյունաբերական խոշորագույն հանգույցը, ֆինանսական, գիտական, կրթական ու մշակութային կենտրոնը: Նրա մասին առաջին հիշատակությունը եղել է 1147թ.՝ որպես ոչ մեծ բերդ: